ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ԱՌԱՋԱԴՐՎՈՂ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԱրՊՀ մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դոցենտ Ա. Բաղդասարյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է միջոցառում՝ «Տարրական դպրոցում ուսումնական գործընթացին առաջադրվող ժամանակակից պահանջները» թեմայով: Միջոցառմանը մասնակցել են նաև հ. 2 միջնակարգ դպրոցի դասվարները, դասախոսներ, ավարտական կուրսի ուսանողները: Միջոցառման նպատակն էր վեր հանել այն հիմնախնդիրները, որոնք առկա են ուսումնական գործընթացում և առաջիկա փորձուսուցման հետ կապված դժվարությունների հաղթահարումը:

Միջոցառման ընթացքում կարևորվեց մասնագիտական գիտելիքների և կարողությունների իրագործումը դպրոցում: Խոսվեց նաև մասնագիտական գիտելիքների, վարքագծի, վարվելակերպի, արժեհամակարգի ձևավորման մասին:

Ամբիոնի վարիչ է.Բաղդասարյանը նշեց «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտական կրթական ծրագրով սահմանված ուսումնառության ակնկալվող արդյունքների արդիականությունը, ծրագրի շրջանակում կիրառվող դասավանդման և ուսումնառության մեթոդների ապահովման և ուսանողների մոտ ուսումնառության ակնկալվող արդյունքների ձեռքբերումները, ներառական կրթության հիմնախնդիրները տարրական դասարաններում: Նա կարևորեց դասվարների օգնականների դերի անհրաժեշտությունը, բուհի պլաններում նախատեսված առարկաների անհրաժեշտությունը, արդիականությունը և պահանջված լինելը աշխատաշուկայում:

Որոշվեց դպրոց-բուհ համատեղ աշխատանքում դասավանդման նոր առաջատար ձևերի մշակում, ներդրում՝ միտված մասնագետների պատրաստման որակի հետագա կատարելագործմանը: Հստակեցվեցին ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպմանն ու կատարելագործմանն ուղղված միջոցառումներ:

«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ
Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
Հրատարակվում է 1994 թվականից
Խմբագիր՝ Զ. Սառաջյան
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91
Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Իմացիր քո համալսարանի մասին:
Այցելի՛ր asu.am կայք:
www.asu.am

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»
№ 09(246)
դեկտեմբեր - 2022

ԱրՊՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՈՒԽ ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ՀՀ ԵՎ ԱՐՏԵՐԿՐԻ ԲՈՒՀԵՐԻՆ

2022 թվականի դեկտեմբերի 12-ից Ադրբեջանը անհիմն պատճառաբանություններով փակել է Լեռնային Ղարաբաղը (Արցախը) Հայաստանին և արտաքին աշխարհին կապող միակ ցամաքային ճանապարհը՝ Լաչինի միջանցքը՝ ոտնահարելով 2020թ. նոյեմբերի 9-ին Ռուսաստանի, Ադրբեջանի և Հայաստանի ղեկավարների եռակողմ համաձայնագրի դրույթները, կոպտորեն խախտելով քաղաքացիների ազատ տեղաշարժվելու, կրթություն, սնունդ և բժշկական օգնություն ստանալու հիմնարար իրավունքները:

Ադրբեջանի նպատակը հայ բնակչությանը նվաստացնելն է, էթնիկ զտումներ իրականացնելը, ֆիզիկական և հոգեբանական ճնշումների ենթարկելը, Արցախը վերջնականապես հայաթափելը: Այսպիսի հանցավոր գործողությունների արդյունքում Արցախի բնակիչները հայտնվել են հումանիտար աղետի եզրին, անհնար է դարձել կենսական նշանակության ապրանքների, սննդի և դեղորայքի, էներգակիրների մատակարարումը 120 000 խաղաղ բնակիչներին, որոնցից շուրջ 30 000-ը երեխաներ են: Հայաստանում անհետաձգելի բուժօգնություն ստանալու հնարավորությունից զրկվել են և հիվանդանոցներում մահանում են հիվանդները, առողջական ծանր վիճակում են մնում անգամ մանկահասակ երեխաները:

Շրջափակված Լեռնային Ղարաբաղը (Արցախը) Ադրբեջանի ագրեսիվ սպառնալիքների պատճառով վաղուց զրկված է նաև օդային ճանապարհից:

Ադրբեջանի այսպիսի գործողությունները հանցագործություն են մարդկության և մարդկայնության հանդեպ և պետք է խստորեն դատապարտվեն միջազգային հանրության կողմից: Հաշվի առնելով ստեղծված աղետալի իրավիճակը՝ Արցախի պետական համալսարանի գիտական խորհուրդը և ուսանողական խորհուրդը պրոֆեսորադասախոսական, ուսանողական ողջ համակազմի անունից կոչ են անում Ձեզ բարձրաձայնել և անել հնարավոր ամենը՝ Արցախը անհապաղ ապաշրջափակելու և խաղաղ բնակիչներին Ադրբեջանի լարած մահացու օղակից փրկելու համար:

Արցախի պետական համալսարանի գիտական խորհուրդ
Արցախի պետական համալսարանի ուսանողական խորհուրդ

ՅԱԿՈԲ ԻՓԾԵԱՆԸ ՊԱՐԳԵՎԱՏՐՎԵԼ Է ԱՐՊՀ-Ի ԿՈՂՄԻՑ

ԱրՊՀ-ում կայացած ռեկտորատի նիստում ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը «ԱրՊՀ 50-ամյակ» հուշամեդալ է շնորհել ԱՀ պետական նախարարի հասարակական հիմունքներով խորհրդական Յակոբ Իփծեանին ԱրՊՀ գլխավոր մասնաշնեքի կահավորման և մի շարք ծրագրերի իրականացման գործում ավանդ ունենալու համար:

ԱրՊՀ ռեկտորը շնորհակալագիր է շնորհել նաև ԱՀ պետական նախարարի աշխատակազմի «Մարդասիրական և զարգացման ծրագրերի համակարգման» բաժնին՝ ԱրՊՀ հիմնանորոգված գլխավոր մասնաշենքի կահավորմանը ցուցաբերած աջակցության համար:

«Կան անհատներ, ովքեր իրենց կատարած աշխատանքի մասին չեն խոսում ընդհանրապես, այլ՝ համեստորեն աշխատում են՝ լինելով իրենց գործի ու հայրենիքի նվիրյալ: Յակոբ Իփծեանը այն նվիրյալներից է, ովքեր մեծ աշխատանք են կատարում՝ առանց դրա մասին բարձրաձայնելու: Բուհի պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության անունից շնորհակալություն ենք հայտնում Յակոբ Իփծեանին՝ իրականացրած աշխատանքի համար», -նշել է ռեկտորը՝ համոզմունք հայտնելով, որ այդ համագործակցությունը շարունակական կլինի:

Իր հերթին Յակոբ Իփծեանը շնորհակալություն է հայտնել ռեկտորին ու ռեկտորատի անդամներին պարգևի համար՝ պատրաստակամություն հայտնելով շարունակել համագործակցությունը ԱրՊՀ-ի հետ:

ՌԴ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՅՑԸ ԱՐՊՀ

Դեկտեմբերի 9-ին Արցախի պետական համալսարանի ռեկտոր Արմեն Սարգսյանն ընդունել է ՌԴ-ից ժամանած պատվիրակությանը, որի կազմում էին Եկատերինբուրգի «Անալիտիկ» հետազոտական ոչ կառավարական ինքնավար կենտրոնի տնօրեն Անդրեյ Մոզոլինը, Ուրալի պետական ագրարային համալսարանի ռեկտորի միջազգային հարցերով խորհրդական Միխայիլ Սվեշնիկովը, ՀՀ-ում ՌԴ Զինված ուժերի «Զվեզդա» հեռուստառադիոընկերության պրոդյուսեր Պավել Բոլդուսովը:

Հանդիպմանը քննարկվել են երկկողմ հարաբերությունների զարգացմանը, ԱրՊՀ և Եկատերինբուրգի բուհերի միջև համագործակցությանը, ուսանողների ակադեմիական փոխանակմանը, համատեղ գիտահետազոտական ծրագրերի իրականացմանն առնչվող հարցեր: Հյուրերը հանդիպումներ են ունեցել նաև ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի ուսանողների ու դասախոսների հետ, հանդես եկել դասախոսություններով և ելույթներով:

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ» ԹԵՄԱՅՈՎ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Դեկտեմբերի 16-ին ԱրՊՀ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի մանկավարժության և հոգեբանության ամբիոնը հերթական միջոցառումն է կազմակերպել: «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողները «Սոցիալական մանկավարժություն» դասընթացի շրջանակում դասընթացավար Արմինե Աբալյանի նախաձեռնությամբ հանդես են եկել «Սոցիալական մանկավարժի գործունեության ուղղությունները» թեմայով ընթերցումներով՝:

Միջոցառման ընթացքում ուսանողները հանդես են եկել զեկուցումներով՝ ներկայացնելով «Սոցիալական մանկավարժ» մասնագիտության բնութագիրը, գործառույթները, էությունն ու բովանդակությունը, մեթոդներն ու տեխնոլոգիաները՝ մանրամասնելով սոցիալական մանկավարժի աշխատանքը հանրակրթական դպրոցներում, ընտանիքի, դեռահասների և պատանիների, սահմանափակ կարողություններ ունեցող, նաև օժտված երեխաների հետ:

«Համոզված եմ, որ այս դասընթացից ձեռք բերած տեսական գիտելիքները հետագայում մեր ուսանողները կօգտագործեն մանկավարժական գործունեության ընթացքում և, կարծում եմ, չեն բավարարվի ստացած գիտելիքներով»,-նշել է Արմինե Աբալյանը՝ հավելելով, որ սոցիալական մանկավարժը այն մասնագետն է, ով կամրջում է մեծահասակների և երեխաների կյանքը՝ դառնալով դժվար իրավիճակներում հայտնված երեխաների առաջին օգնականն ու պահապանը:

Միջոցառումը կարևորել և ուսանողների աշխատանքներից գոհունակություն են հայտնել ԱրՊՀ ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, մանկավարժության և սպորտի ֆակուլտետի դեկան Շահեն Այդինյանը, մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ Էլլադա Բաղդասարյանը՝ շնորհակալություն հայտնելով դասընթացավարին և ուսանողներին:

ՌՈՒՍԱՑ ԼԵԶՎԻ ԱՄԲԻՈՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼ Է ԳԻՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ

ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնը «Ռուսաց լեզու և գրականություն» կրթական ծրագրի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողների հետ կազմակերպել է գիտական սեմինար «Բանասիրության նորություններ» թեմայով:

Սեմինարը միտված էր ուսանողների հետազոտական կարողությունների, գիտական գրականությունից և տարբեր աղբյուրներից օգտվելու, վերլուծական հմտությունների զարգացմանը:

Մագիստրատուրայի ուսանողները հանդես են եկել զեկուցումներով՝ անդրադառնալով ժամանակակից ռուսաց լեզվի բառապաշարին ու բառակազմությանը, ռուսաց լեզվի դասավանդման առանձնահատկություններին, ռուսաց լեզվի՝ որպես օտար լեզվի դասավանդման մոտիվացիայի բարձրացման խնդիրներին, դասավանդման մեթոդներին, և այլ արդիական թեմաների, որոնք գտնվում են ամբիոնի դասախոսների ամենօրյա աշխատանքի ուշադրության առանցքում:

ԳՐՔԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ

ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի ռոմանագերմանական լեզուների ամբիոնի դոցենտ, բ.գ.թ., դոցենտ Սիրվարդ Ստեփանյանի նախաձեռնությամբ դեկտեմբերի 7-ին կազմակերպվել է դաղստանցի հրեա գրող Գադիմ Ամիրովի «Արցունքներ դրախտում» վեպի քննարկումը:

Վեպը լույս է տեսել ռուսերենով 2022թ. Մոսկվայում, անմիջապես թարգմանվել է հայերեն, գրքի շնորհանդեսը եղել է Մոսկվայում, Երևանում թարգմանության շնորհանդեսին ներկա է եղել նաև հեղինակը: Ըստ հեղինակի՝ վեպն ունի ճանաչողական նշանակություն: Վեպի հիմքը 2020թ. Արցախյան պատերազմն է: Այն ճշմարտության մասին է, և հեղինակն էլ դեպի ճշմարտությունը քայլող մարդն է:

Քննարկմանը մասնակցել են ֆակուլտետի ուսանողները, ներկա են եղել ֆակուլտետի դեկան Լուսինե Մարգարյանը, ամբիոնների վարիչներ Ռիտա Պետրոսյանը, Նոնա Դավթյանը: Քննարկման կարգախոսն էրգ ,Կարդա, փոխիր աշխարհը:

Քննարկման ձևաչափը ներառում էր տեսադիտում շնորհանդեսից, ընթերցումներ, ելույթներ, կարծիքներ ու հակադարձումներ: Քննարկման ավարտին ներկաները կարևորեցին վեպի արդիական նշանակությունը և արժևորեցին այն որպես պարտադիր ընթերցանություն և իրենց երախտագիտությունը հայտնեցին հեղինակին ու նաև թարգմանչին:

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ ԵՆ ՄԻԴԻԱԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ

Դեկտեմբերի 16-ին ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնը կազմակերպել է միջոցառում: «Լրագրություն» կրթական ծրագրի ուսումնական պլանում ընդգրկված «Ղարաբաղյան հակամարտության լուսաբանումը միջազգային մամուլում» դասընթացի շրջանակում դասընթացավար, ամբիոնի դասախոս Անուշ Դոլուխանյանի նախաձեռնությամբ ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի «Լրագրություն» 4-րդ կուրսի ուսանողների մասնակցությամբ կազմակերպվել են «Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուսաբանման տիպաբանությունը միջազգային մամուլում» թեմայով մեդիաընթերցումներ:

Միջոցառման ընթացքում ուսանողները հանդես են եկել զեկուցումներով՝ ներկայացնելով «Լեռնային Ղարաբաղ. տեղեկատվական հակամարտություն», «Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուսաբանումը ադրբեջանական ԶԼՄ-ներում», «Լեռնային Ղարաբաղի տարածքային ամբողջականության հիմնախնդիրը ադրբեջանական ԶԼՄ-ներում», «Լեռնային Ղարաբաղի ժողովրդի կարգավիճակի հարցի լուսաբանումը ադրբեջանական ԶԼՄ-ներում», «Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետևանքով փախստականների և ներքին տեղահանվածների խնդրի լուսաբանումը ադրբեջանական ԶԼՄ-ներում», «Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուսաբանումը ռուսական ԶԼՄ-ներում», «Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուսաբանումը ֆրանսիական ԶԼՄ-ներում», «Լեռնային Ղարաբաղի հակամարտության լուսաբանումը ամերիկյան ԶԼՄ-ներում» թեմաները, ծավալվել է քննարկում:

ԿԱՅԱՑԵԼ Է ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Դեկտեմբերի 23-ին տեղի է ունեցել ԱրՊՀ գիտխորհրդի տարեվերջյան նիստը, որի ընթացքում քննարկվել և որոշում է ընդունվել՝ պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողական կառույցների անունից կոչով դիմելու Հայաստանի Հանրապետության և արտերկրի առաջատար բուհերին՝ Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության շրջափակման խնդրի հետ կապված հնարավոր քայլերը ձեռնարկելու և խնդրի լուծմանը աջակցելու նպատակով: Կոչը կթարգմանվի տաբեր լեզուներով և կուղարկվի արտերկրի առաջատար բուհերին:

Գիտխորհուրդը օրակարգային հարցերով քննարկել և հաստատել է ուսումնական գործընթացին վերաբերող հարցեր: Դեկանները տեղեկատվություն են ներկայացրել ԱրՊՀ 2022-2023 ուսումնական տարվա հեռակա ուսուցման համակարգի առաջին կիսամյակի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների, ԱրՊՀ 2022-2023 ուսումնական տարվա առկա ուսուցման համակարգի առաջին կիսամյակի եզրափակիչ քննությունների նախապատրաստական աշխատանքների մասին:

Գիտխորհուրդը տպագրության է երաշխավորել ԱրՊՀ 2021-2022 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը և գիտական մի շարք աշխատություններ:

ՀԱՄԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՀԱՎԱՔ

Դեկտեմբերի 25-ին Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում տեղի ունեցավ համաժողովրդական հանրահավաք, որին մասնակցել են հազարավոր արցախցիներ:

Հանրահավաքին մասնակցել են նաև Արցախի պետական համալսարանի ուսանողներն ու պրոֆեսորադասախոսական կազմը՝ ռեկտոր Արմեն Սարգսյանի գլխավորությամբ:

Հանրահավաքի մասնակիցները մեկ անգամ ևս վերահաստատել են հայրենիքում՝ Արցախի Հանրապետությունում, ապրելու իրենց կամքն ու վճռականությունը և պահանջել բացել Արցախի Հանրապետությունը Հայաստանին և աշխարհին կապող միակ կյանքի ճանապարհը, որն արդեն երկու շաբաթ է շարունակվում է փակ մնալ Ադրբեջանի կողմից:

Հանրահավաքի մասնակիցներն ընդգծել են Արցախը հայկական պահելու համար պայքարելու իրենց անկոտրում կամքը:

ԲՈՒՀ-ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱՀ Սահմանադրության ընդունման հանրաքվեի օրվան ընդառաջ Արցախի պետական համալսարանի իրավունքի ամբիոնի նախաձեռնությամբ մայր բուհի «Իրավագիտություն» մասնագիտությամբ սովորող 2-րդ կուրսի մի խումբ ուսանողներ այցելել են Ստեփանակերտի N 8 ավագ դպրոց և 8-9-րդ դասարանների աշակերտներին ներկայացրել Սահմանադրության կարևորությունն ու անհրաժեշտությունը, հիմնական դրույթները:

Իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.թ. Տաթևիկ Գևորգյանի խոսքով՝ արդեն ավանդույթ դարձած այս նախաձեռնության նպատակն աշակերտների շրջանում իրավագիտակցության մակարդակի բարձրացումն է, իրավական մշակույթ ձևավորելը, որը հետագայում մեծ դեր է ունենալու ինչպես յուրաքանչյուրի կյանքում, այնպես էլ իրավական պետության ձևավորման և կայացման հարցում:

Պատասխանատուները հավաստիացնում են, որ բուհ-դպրոց համագործակցության շրջանակում նման միջոցառումները շարունակական կլինեն:

ՆՇՎԵԼ Է ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ

Դեկտեմբերի 3-ը նշվում է որպես հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օր: Հաշմանդամություն ունեցող, ուսուցման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, ուշադրության պակաս և գերակտիվության համախտանիշ (ՈՒՊԳՀ), աուտիզմ, մտավոր թերզարգացվածություն ունեցող երեխաների հետ աշխատանքի և դաստիարակության առանձնահատկությունների մասին են խոսել Արցախի պետական համալսարանի մանկավարժության և հոգեբանության ամբիոնի դասախոս Ռոզալյա Հարությունյանի նախաձեռնությամբ «Հոգեբանություն» 1-ին և 3-րդ կուրսերի ուսանողների կազմակերպած միջոցառման ընթացքում:

Միջոցառումը բաց դաս-քննարկում էր՝ նվիրված հաշմանդամների միջազգային օրվան: Միջոցառմանը մասնակցել են հոգեբանական կենտրոնը, մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ էլլադա Բաղդասարյանը, դասախոսներ և ուսանողներ: Ամբիոնի վարիչը արժևորել է օրվա խորհուրդը, հոգեբանների ներդրումը այդ խնդրի լուծման հարցում և կարևորել նման միջոցառումները:

ՀՈՒՇ-ԵՐԵԿՈ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄՈՆԹԵ ՄԵԼՔՈՆՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 65-ԱՄՅԱԿԻՆ

Դեկտեմբերի 2-ին Ստեփանակերտի Շառլ Ազնավուրի անվան մշակույթի կենտրոնում Արցախի պետական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի նախաձեռնությամբ կազմակերպվել է հուշ-երեկո՝ նվիրված Արցախի և Հայաստանի հերոս, լեգենդար զորավար Ավոյի ծննդյան 65-ամյակին:

Միջոցառման ներկաները լռության րոպեով հարգանքի տուրք են մատուցել Արցախյան բոլոր պատերազմներում նահատակվածների հիշատակին:

«Արցախը՝ որպես Մայր Հայաստանի անքակտելի մաս, նրա հայկականության պահպանման համար մղած պայքարը հայ ազգային-ազատագրական պայքարում կարևոր նշանակություն ունի: Այդ ամենը կարևորելով՝ հայ ժողովրդի բազմաթիվ զավակներ հերոսացան, և նրանց շարքին է դասվում լեգենդար հրամանատարը, ով հայոց նվիրյալ գործիչների աստղաբույլում է: Նա մարմնացումն է անկեղծ մղումների, ազգային, բարոյական արժանիքների: Երանի մեր ազգի ողջ հավաքական կերպարը լիներ արտացոլումը հերոս հայորդու դրական արժանիքների: Ես գտնում եմ, որ այսպիսի միջոցառումները շատ կարևոր են ռազմահայրենասիրական դաստիարակությունը պատշաճ մակարդակով պահելու, ուսանողներին հայրենասիրական ոգի ներշնչելու համար»,-ասել է ֆակուլտետի դեկան Արմինե Խաչատրյանը:

Միջոցառմանը ևս մեկ անգամ կարևորվել է հերոսի սխրանքը, քանզի նա իր էությամբ և թողած ավանդով դարձավ հայրենասիրության, ազգապաշտության, նվիրվածության խորհրդանիշ, դարձավ լուսատու փարոս սերունդների համար:

Հուշ-երեկոյի ընթացքում համալսարանականները հանդես են եկել բանաստեղծական ու երաժշտական կատարումներով: